

**ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Հաստատում եմ՝



**Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի**

Հեղինակ՝ Ղամբարյան Ա. Ս.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Դասընթաց՝ Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և
մեթոդիկա**

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

**Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական
ուսումնասիրություններ**

ԵՐԵՎԱՆ

1. Ներածություն.

"Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և մեթոդիկա" դասընթացի արդիականությունը պայմանավորված է գիտատեխնիկական հեղափոխության արագ զարգացմամբ, գիտելիքների արագ թարմացմամբ, գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ծավալի աճով: "Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն" դասընթացը ներառում է հիմնահարցի փիլիսոփայական տեսանկյունների վերհանումը, գիտական ճանաչողության մեթոդաբանական հիմունքների բացահայտումը, տեսական հետազոտության կառուցվածքի և հիմնական փուլերի ուսումնասիրության հիմնահարցերը: Այս դասընթացը ուսումնասիրում է տեսական հետազոտության մեթոդները, գիտական հետազոտություններում մոդելավորման հարցերը և օգնում է ճիշտ ընտրել գիտական հետազոտության ուղղությունը:

2. Դասընթացի նպատակը և խնդիրը.

Դասընթացը կոչված է մագիստրոսներին ծանոթացնելու գիտության մեթոդաբանության հիմնական հասկացություններին, ցույց տալու փիլիսոփայության և գիտության փոխհարաբերությունները, բնութագրելու գիտության զարգացման հիմնական փուլերը: Այս դասընթացի ուսումնասիրության ընթացքում մագիստրոսները գիտելիքներ կստանան գիտական գիտելիքների կառուցվածքի, գիտական տեսության կառուցման մեխանիզմի, գիտական տեսությունների տիպաբանության մասին: Հատուկ ուշադրություն է դարձվելու մագիստրոսներին գիտության տեսական և էմպիրիկ մեթոդներին ծանոթացնելուն:

Դասընթացի նպատակն է ուսանողներին պատրաստել գիտության փիլիսոփայության ոլորտում, գիտելիքներ տալ գիտության մեթոդաբանության ժամանակակից մակարդակի մասին, սերմանել ինքնուրույն ստեղծագործական գիտական հետազոտության հմտություններ:

Դասընթացի խնդիրները՝

- ա) տալ ուսանողին պատկերացում գիտության էվոյուցիայի եւ փիլիսոփայության դերի մասին այս գործընթացում;
- բ) բացահայտել գիտության տեղը հոգեւոր մշակույթի կառուցվածքում, ինչպես նաեւ փիլիսոփայության տեղը գիտության կառուցվածքում;
- գ) բացահայտել հիմնական տեսական եւ էմպիրիկ մեթոդների բովանդակությունը:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է** իմանան՝

- գիտական գիտելիքների բնույթը
- գիտության դերը հասարակության մեջ,
- գիտության և փիլիսոփայության փոխհարաբերությունները

կարողանան՝

- վերլուծել գիտության և փիլիսոփայության փոխազդեցության առանձնահատկությունները հոգևոր մշակույթի զարգացման պատմության մեջ և ներկայումս;
- վերլուծել գիտությունը գլոբալիզացիայի գործընթացի համատեքստում

ունակ լինեն՝

- ինքնուրույն գիտական պնդումների ընդունման հմտություններին, արտահայտել և պաշտպանել սեփական տեսակետը գիտության տեսական խնդիրների լուծման ժամանակ:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 Կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
1. Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	36	36					
1.1. Լսարանային պարապմունքներ:	18	18					
1.1.1. Դասախոսություններ	10	10					
1.1.2. Սեմինարներ	8	8					
1.2. Ինքնուրույն աշխատանք	18	18					
Անփոփիչ ստուգում (քննություն, ստուգաթղթ)	Ստուգաթղթ	Ստուգաթղթ					

2.3. Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ալ. ժամ)	Դաս ախտ սությ ունեն ր (ալ. ժամ)	Մեմին ար (ալ. ժամ)	Պարապմ- ունքների այլ տեսակներ (ալ. ժամ)
Թեմա 1. Գիտությունը որպես հոգևոր մշակույթի ձև: Գիտության առարկա «գիտական ճանաչողության մեթոդաբանություն»	8	2	2	4
Թեմա 2. Գիտական գիտելիքների առանձնահատկությունները				
Թեմա 3. Փիլիսոփայության և գիտության փոխհարաբերությունները				
Թեմա 4. Գիտության Գենեզիս. Գիտության զարգացման հիմնական փուլերը	12	4	2	6
Թեմա 5. Գիտական տեսությունը և կառուցվածքը. Գիտական փաստ եւ գիտական տեսություններ				
Թեմա 6. Համընդհանուր տեսական և էմպիրիկ Գիտության մեթոդներ	8	2	2	4
Թեմա 7. Գիտության և հոգևոր մշակույթի այլ ձևերում ճշմարտության հասկացությունը. Ճշմարտությունը և գիտական ռացիոնալության խնդիրը	8	2	2	4
Ընդամենը	36	10	8	18

3. Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1. Գիտությունը որպես հոգևոր մշակույթի ձև: Գիտության առարկա

Գիտությունը որպես հոգևոր մշակույթի հատուկ ձև և նրա տեղը ժամանակակից աշխարհում: Գիտության երեք հատկանիշները՝ գիտությունը որպես գիտելիքի համակարգ, գիտությունը որպես մտավոր գործունեության տեսակ, գիտությունը որպես սոցիալական ինստիտուտ: Բնության գիտություններ, սոցիալ-հումանիտար գիտություններ, տեխնիկական գիտություններ: Գիտության մեջ մեթոդի հասկացությունը: Մեթոդաբանության հասկացությունը և երեք տարբեր արժեքները:

Հիմնական փիլիսոփայական սկզբունքների դերը գիտության «շինության» ձևավորման գործում: «Գիտական ճանաչողության մեթոդաբանությունը» որպես գիտության առարկա: Ինտերնալիզմի և էքստերնալիզմի խնդիրը գիտության զարգացման պատմության մեջ:

Թեմա 2. Գիտական գիտելիքների առանձնահատկությունները

Գիտության հիմնական առանձնահատկությունները:

Գիտության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան: Գիտական գիտելիքների տարբերությունը առօրեական, փիլիսոփայական, աստվածաբանական գիտելիքներից: Բնագիտական, մաթեմատիկական, սոցիալ - հումանիտար, տեխնիկական գիտելիքների յուրօրինակությունը:

Թեմա 3. Փիլիսոփայության և գիտության փոխհարաբերությունները

Փիլիսոփայության և գիտության հարաբերակցության արմատական հարցեր: Փիլիսոփայության և գիտության հարաբերակցության տարբեր կոնցեպտներ: Փիլիսոփայությունը և գիտությունը որպես հնագույն դարաշրջանում հոգևոր մշակույթի միասնական ձև: Փիլիսոփայության և գիտության բաժանման գործընթացը նոր ժամանակներում և այս գործընթացի շարունակությունը ժամանակակից դարաշրջանում: Գիտության և փիլիսոփայության ճանաչողության օբյեկտի տարբերությունը: Գիտական և փիլիսոփայական խնդիրների լուծման մեթոդաբանության տարբերության և դրանց հստակ տարանջատման հիմնախնդիրը: Փիլիսոփայության պատմության մեջ այդ փորձերի անհաջողությունների պատճառները: Փիլիսոփայության տեղն ու դերը գիտական տեսությունների կայացման և զարգացման գործում և գիտության դերը փիլիսոփայական մտածողության ձևավորման գործում: Գիտության փիլիսոփայական հիմքերի հասկացությունը:

Թեմա 4. Գիտության գենեզիս. Գիտության զարգացման հիմնական փուլերը.

"Նախագիտություն" և "գիտություն" հասկացությունները: Գիտական գիտելիքների առաջացման երկու աղբյուր՝ մտավոր մոդելների ստեղծում (բանականությունից դուրս բերվող); փորձի տվյալների ամփոփում:

Անտիկ գիտություն: Զարգացման հիմնական փուլերը: Մտածողության տեսական եղանակի ստեղծումը և նրա սոցիալ-մշակութային հիմքերը: Արաբախոս երկրների գիտություն: Այս գիտության ազդեցությունը եվրոպական գիտության վրա:

Գիտության դրույթները միջնադարում և նրա կարգավիճակը փոփոխությունը Վերածննդի ժամանակաշրջանում: Միջնադարի և Վերածննդի գիտության դերը եվրոպական գիտական ավանդույթի ծագման հարցում:

Դասական գիտություն. Նոր ժամանակի գիտության առաջացում (Կոպեռնիկոս, Գալիլեյ, Նյուտոն, Կեպլեր, Հուկ, Բեկոն, Դեկարտ): Այս գիտության կայացման գործում նոր դասական փիլիսոփայության դերը: Նոր ժամանակի գիտության մեթոդի խնդիրը: Գիտության, հատկապես բնագիտության հիմնական ձեռքբերումները՝ 18-19-րդ դարերում: Գիտատեխնիկական հեղափոխությունը՝ որպես 20-րդ դարի գիտության զարգացման խթան և դրա սոցիալական հետևանքները: Ոչ դասական գիտություն և հետդասական գիտություն: Ժամանակակից գիտության հիմնական հատկանիշները:

Թեմա 5. Գիտական տեսությունը և կառուցվածքը. Գիտական փաստ և գիտական տեսություններ

Գիտական տեսությունը որպես գիտության համակարգման բարձրագույն ձև: Գիտական տեսության ընդհանուր բնութագիրը: Գիտական տեսությունների տիպաբանություն: Տեսական մոդելը որպես տեսության ներքին կազմակերպության տարր: Տեսական գիտելիքների միջնորդավորված բնույթը՝ իդեալական օբյեկտների տեսություն և համակարգ:

Գիտական օրենքի հասկացությունը՝ բնության օրենքները և գիտության օրենքները: Գիտության օրենքի իմացաբանական բովանդակությունը: Դատողությունների տրամաբանական այն բնութագրերը, որոնցում ձևակերպվում են գիտության օրենքները: Օրենքում արտահայտված հոգեբանական, տրամաբանական և ֆիզիկական անհրաժեշտության բնույթի խնդիրը: Օրենքների ստացման և հիմնավորման եղանակները, օրենքների գործառույթները գիտելիքների մեջ:

Գիտական գիտելիքը, նրա մակարդակները և փուլերը: Գիտական գիտելիքների մակարդակներն ու փուլերը՝ դրանց առանձնացման հիմքերը: Հետազոտության էմպիրիկ մակարդակը, դրա առանձնահատկությունները, գիտության խնդիրներն ու գործառույթները: Գիտական ուսումնասիրության տեսական մակարդակը, դրա առանձնահատկությունները, խնդիրները և գործառույթները: Գիտական խնդիրը՝ որպես գիտական գիտելիքների տարր և դրա համակարգման ելակետային ձև: Գիտական խնդիրը և դրա լուծման պայմանները. Գիտական խնդիրների տիպաբանությունը:

Թեմա 6. Գիտության համընդհանուր, տեսական և էմպիրիկ մեթոդներ

Համընդհանուր մեթոդներ՝ վերլուծություն և սինթեզ, ընդհանրացում, դեդուկցիա և ինդուկցիա; անալոգիա, մոդելավորում, համակարգային մոտեցում և այլն: Գիտական գիտելիքների էմպիրիկ մեթոդներ: Դիտարկումը որպես էմպիրիկ ճանաչողության մեթոդ: Դիտարկման առանձնահատկությունները գիտության և մասնավորապես հոգեբանության մեջ: Դիտարկման կառուցվածքը և տեսակները: Գիտական դիտարկման ընտրողականությունը և դրա պայմանավորվածությունը կանխիկ

գիտելիքների համակարգով: Գիտափորձը որպես գիտական հետազոտության հիմնական մեթոդ: Դիտարկման և գիտափորձի առանձնահատկությունները հոգեբանության մեջ, դրանց նմանությունն ու տարբերակումը: Գիտական փորձի կառուցվածքը: Փորձնական գործունեության նպատակներն ու խնդիրները: Փորձի տեսակները: Մտավոր փորձ, դրա էությունը, կիրառման ոլորտը և ճանաչողական կարգավիճակը: Մտավոր փորձի էվրիստիկական հնարավորությունները: Զրույցը և թեստավորումը որպես հոգեբանության հատուկ մեթոդներ: Էմպիրիկ ուսումնասիրության այլ մեթոդներ-համեմատությունը, նկարագրությունը, չափումը: Գիտական հետազոտության տեսական մեթոդները: Ֆորմալիզացիա-ֆորմալացված լեզվով բովանդակային գիտելիքների ներկայացման առանձնահատկությունները: Վարկածը որպես գիտական գիտելիքների կառուցման և զարգացման հիմնական մեթոդ: Հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդի ընդհանուր բնութագիրը: Վարկածի տեսակները: Գիտական հիպոթեզի կառուցման և զարգացման գործընթացի հիմնական փուլերը: Հիպոթեզների կառուցման գործընթացում ինդուկցիայի, դեդուկցիայի և անալոգիայի դերը:

Թեմա 7. Գիտության և հոգևոր մշակույթի այլ ձևերի մեջ ճշմարտության հասկացությունը: Ճշմարտությունը և գիտական ռացիոնալության խնդիրը

Ճշմարտության հասկացությունը փիլիսոփայության մեջ հոգևոր մշակույթի տարբեր ձևերով: Գիտական գիտելիքների ճշմարտացիությունն ու ապացուցողականությունը: Գիտական ճշմարտությունների հարաբերական բնույթը: Գիտության փիլիսոփայության մեջ ճշմարտության հասկացությունից հրաժարվելու փորձերը և դրանց մոտիվացիան: Ճշմարտությունը որպես դատողությունների բնութագիր և որպես մշակութային արժեք:

Գիտական ռացիոնալության խնդիրը ժամանակակից գիտության փիլիսոփայության համակարգում: Ռացիոնալության տրամաբանական-էմպիրիկ մոտեցումը, բանականությունը՝ որպես բանականության օրենքներին համապատասխանություն: Բանականությունը որպես նպատակահարմարություն՝ բանականության և գիտության նպատակը: Բանականություն և ճշմարտություն: Մարդկային գործունեության գիտական և այլ տեսակները: Մարդու կողմից աշխարհի հոգևոր - գործնական յուրացման ընթացքում ռացիոնալի և իռացիոնալի հարաբերությունը:

Մոլորություն և նրա դերը գիտական գիտելիքների մեջ: Ճշմարտության հասկացության տարբերակումը «սուտ» և «սխալ» հասկացություններից:

Վերջնական ստուգարքի հարցեր

1. Մեթոդը և դրա դերը գիտության մեջ
2. «Մեթոդաբանություն» տերմինի տարբեր նշանակությունները

3. Գիտության առանձնահատկությունը որպես հոգևոր մշակույթի ձև
4. Փիլիսոփայական սկզբունքները և դրանց դերը գիտության ձևավորման գործում
5. Ինտերնալիզմ և էքստրեռնալիզմ հասկացությունները
6. Գիտությունը անտիկ դարաշրջանում
7. Ինչու է անթույլատրելի գիտությամբ փիլիսոփայական խնդիրների լուծումը և հակառակը
8. Նախագիտությունից գիտական գիտելիքների առաջացման հիմնահարցը
9. Անտիկ գիտության առանձնահատկությունները
10. Արաբալեզու երկրների գիտության առանձնահատկությունները
11. Գիտությունը Միջնադարում և Վերածննդի դարաշրջանում.
12. Ժամանակակից գիտության առաջացումը
13. Նոր ժամանակի գիտության մեթոդի խնդիրը
14. 19-րդ դարի վերջին ֆիզիկայի ճգնաժամի պատճառները
15. Ոչ դասական գիտության առանձնահատկությունները
16. Հետդասական գիտության առանձնահատկությունները
17. Գիտական գիտելիքների մակարդակները
18. Հետազոտության էմպիրիկ մակարդակի առանձնահատկությունները
19. Ուսումնասիրության տեսական մակարդակի առանձնահատկությունները
20. Ինչ է գիտական խնդիրը
21. Ինչ է փաստը գիտության մեջ
22. Գիտության մեջ օրենք հասկացությունը
23. Բնության օրենքների տարբերությունը գիտության օրենքներից
24. Ինչ է գիտական տեսությունը
25. Ինչու գիտական գիտելիքը միջնորդավորված բնույթ ունի
26. Գիտությունը որպես իդեալական օբյեկտների համակարգ
27. Մաթեմատիկայի դերը գիտական գիտելիքների մեջ
28. Համընդհանուր մեթոդների ընդհանուր բնութագիրը
29. Ինչու է տարբերվում տարբերվում դիտարկումը գիտափորձից
30. Ինչ էք հասկանում մտավոր փորձի տակ
31. Ֆորմալացման դերը գիտության մեջ
32. Վարկածը եւ տեսությունը
33. Հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդ
34. Աքսիոմատիկ մեթոդ
35. Ինչ ենք հասկանում գիտության փիլիսոփայության ճշմարտացիության տակ?
36. Գիտական ռացիոնալության խնդիրը ժամանակակից գիտության փիլիսոփայության համակարգում
37. Ռացիոնալի և իռացիոնալի հարաբերակցությունը մարդու հոգևոր գործունեության մեջ
38. Հոգեբանության առաջացումը որպես գիտություն
39. Ֆրոյդի հոգեվերլուծությունը եւ դրա հետագա զարգացումը
40. Հումանիստական հոգեբանություն

41. Կոգնիտիվ հոգեբանություն
42. Հոգեֆիզիոլոգիական հիմնախնդիրները և դրանց փիլիսոփայական վերլուծությունը.

4. Գրականության ցանկ

Բազային գրականություն

1. Ա. Ղարաբուլյան Փիլիսոփայության հիմունքներ | Ուսումնամեթոդական ձեռնարկ, էլեկտրոնային հրատարակություն, Երևան, 2016, 23 էջ
2. Հակոբյան Ս. Ս. Փիլիսոփայության տեսություն և պատմություն | Ուսումնական ձեռնարկ, (երկրորդ վերամշակված հրատարակություն), Երևան, 2009
3. Ալբերտ Ղազարյան Փիլիսոփայության պատմության՝ որպես գիտական գիտելիքի ընդունման չափանիշները | Բանբեր Երևանի համալսարանի: Փիլիսոփայություն, հոգեբանություն: 2020, 1 (31), 15-22 էջ
4. Степин В. С. Философия науки. Общие проблемы. М., 2007
5. Введение в историю и философию науки. Под ред. С.А. Лебедева. Москва. 2005.
6. Философия науки. Под ред. С.А. Лебедева. Москва. 2006.
7. В.П. Кохановский. Философия и методология науки. Ростов-на Дону 1999 .

Հիմնական գրականություն

1. Философия социальных и гуманитарных наук. Под ред. Лебедева. М., 2006.
2. Бахтин М. К философским основам гуманитарных наук. // СС в 7 Т. 5. М., 1996.
3. Розов Н.С. Философия и теория истории. М., 2002.
4. Микешина Л.А. Ценностные предпосылки в структуре научного знания.
5. Аветисян П.С. Формирование единого образовательного пространства СНГ в условиях глобализации. Ереван, 2007
6. Косарева Л.М. Рождение науки Нового времени из духа культуры. М., 1997.
7. К. Поппер. Логика и рост научного знания. М., 1983.
8. Гайденко П.П. Эволюция понятия науки. М.
9. Степин В.С. Теоретическое знание. М. 2000

Լրացուցիչ գրականություն

1. Философия науки под редакцией С.А. Лебедева. М. 2006.
2. Баженов Л.Б. Строение и функции естественнонаучной теории. М., 1978
3. Витгенштейн Л. Логико-философский трактат. М., 1958.
4. Гадамер Г.-Г. Истина и метод. М., 1988.
5. Лакатос И. Доказательства и опровержения. М., 1967.
6. Мамчур Е.А. Проблема выбора теории. М., 1975.
7. Микешина Л.А. Методология научного познания в контексте культуры. М., 1992.
8. Миронов В.В. Образы науки в современной культуре и философии. М., 1997.
9. Никитин Е.П. Объяснение – функция науки. М., 1970.
10. Структура и развитие науки. М., 1978.

5. Մեթոդական բլոկ

Դասավանդման մեթոդիկա, տվյալ մեթոդիկայի ընտրության հիմնավորում:

Այս դասընթացի դասավանդման մեթոդիկայի ընտրության ժամանակ պետք է ելնել մագիստրոսի մասնագիտության էմպիրիկ և տեսական գիտելիքների ծավալից, որոնք նա ունի գիտության այլ ոլորտներից, ընդհանուր գիտելիքներից, որոնք նա յուրացրել ինչպես բակալավրի, այնպես էլ ավագ դպրոցի դասընթացներում: Պետք է նաև օգտագործել փիլիսոփայական այն գիտելիքները, որոնք նրանք ձեռք են բերել փիլիսոփայության հիմունքները և ժամանակակից բնագիտության հայեցակարգեր դասընթացներից: Հաշվի առնելով, որ մագիստրատուրայում պատրաստում են ապագա գիտաշխատողների՝ դասախոսն օգտագործում է այնպիսի մեթոդներ, որոնց նպատակն է ուսումնասիրության ընթացքում հասնել ուսանողների ակտիվ մասնակցությանը ուսումնասիրվող խնդիրների ձևակերպման և լուծման հարցում:

Մեթոդական առաջարկություններ ուսանողների համար

Մեթոդական ցուցումներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման վերաբերյալ

Գիտական գիտելիքների մեթոդաբանությունը ուսումնասիրելիս ուսանողներին խորհուրդ է տրվում կարդալ առաջին հերթին փիլիսոփայության դասականների և ժամանակակից հեղինակների աշխատանքները մեթոդաբանության գիտական գիտելիքների խնդիրների վերաբերյալ, փորձել ինքնուրույն վերլուծել դրանք, փորձել քննադատաբար վերաբերվել շարադրվածին և փորձել մշակել այդ խնդիրների սեփական լուծումը և ընտրել առավել համոզիչ փաստարկները հիմնավորելու իրենց դիրքորոշումը: